Վ Ճ Ռ Ե Ց

1. «ԷՅԲԻԷՖ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից վերջինիս և «ԷՅԲԻԷՖ» ՍՊ ընկերության միջև 18.01.2023թ. կնքված թիվ «ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22-23/105-1-06-23» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել՝ հայցային վաղեմություն կիրառելու հիմքով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Դատարանի 03.08.2023թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը, այն է՝ արգելել «Ակբա Բանկ» ԲԲ ընկերությանը կատարել որևէ գործողություն՝ ուղղված ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «ԷՅԲԻԷՖ» ՍՊ ընկերության միջև 18.01.2023 թվականին կնքված թիվ «ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22-23/105-1-06-23» ծածկագրով պայմանագրի շրջանակներում «ԷՅԲԻԷՖ» ՍՊ ընկերության ստանձնած պարտավորությունների կատարմանը, այն է՝ որակավորման և պայմանագրի ապահովման երաշխիքներով նախատեսված գումարների գանձմանը, մինչև սույն գործով վերջնական դատական ակտի կայացումը՝ պետք է պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

4.Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԼԻԼԻԹ ՍԱՂՈՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարկվելու պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **ԼԻԼԻԹ ՍԱՂՈՅԱՆ**